ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ

CHAIRMAN OF CENTRAL ELECTORAL COMMISSION OF THE REPUBLIC OF ARMENIA

N 01-3/182

«17» 11 2008 թ.

Ձեր _____ N _____

«ՔԱՂԱՔԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ
ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ «ՇԻՐԱԿ ԿԵՆՏՐՈՆ»
Հ/Կ ՆԱԽԱԳԱՀ Վ. ԹՈՒՄԱՍՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Թումասյան,

ՀՀ ընտրական օրենսգրքի վերաբերյալ Ձեր առաջարկությունների կապակցությամբ հայտնվում է, որ օրենսգրքում փոփոխություններ կատարվում են հիմնականում հաշվի առնելով միջազգային փորձը և Վենետիկի հանձնաժողովի՝ ընտրական հարցերում բարենպաստ գործունեության կանոնագրքի դրույթները:

Ձեր դիմումի 1, 4 և 5 կետերում արված առաջարկները չեն համապատասխանում Վենետիկի հանձնաժողովի նշված կանոնագրքի սահմանումներին: Ընտրական գործընթացներում կարևորվում է ընտրությունների արդյունքների հնարավորինս արագ ամփոփումը և դրանց մասին հանրությանն արագ իրազեկելը, իսկ Ձեր առաջարկությունների պարագայում տեսականորեն հնարավոր է, որ դրանք անվերջ և անհարկի ձգձգվեն:

Քվեաթերթիկում «Բոլորին դեմ» տողը վերականգնելը տրամաբանական չէ, քանի որ մեկից ավելի թեկնածու քվեարկվելու դեպքում ընտրությունների արդյունքներն ամփոփվում են վաշվի առնելով միայն թեկնածուներին կողմ քվեարկված քվեաթերթիկների թիվը: Նույն կերպ է ամփոփվում նաև Հանրապետության Նախագահի ընտրության արդյունքները, ինչն ամրագրված է ՀՀ Սահմանադրությամբ, և նպատակահարմար չէ ունենալ ընտրությունների արդյունքների ամփոփման տարբեր ձևեր:

Կարծում եմ նպատակահարմար չէ նաև առանձնացնել համայնքի ղեկավարի և ավագանու անդամների ընտրությունները: Ինչպես ցույց է տալիս փորձը, այդ

ընտրությունները տարբեր ժամկետներում անցկացնելու դեպքում նվազում է թեկնածուների և ընտրությունների մասնակիցների թիվը, ինչը չի խրախուսվում: Անհասկանալի է նաև տարբերակումը մինչև 50000 և դրանից ավել ընտրող ունեցող համայնքների միջև: Բոլոր դեպքերում քվեարկության արդյունքների ամփոփումն իրականացվում է ընտրական տեղամասում և անկախ համայնքում ընտրողների թվից, մեկ ընտրական տեղամասում ընդգրկված ընտրողների թիվը չի գերազանցում 2000-ը: Միաժամանակ, Ձեր առաջարկի կիրառման դեպքում հնարավոր է խնդիրներ առաջանան այդ մարմինների պաշտոնավարման ժամկետների հետ կապված, ինչը սահմանադրական նորմ է: Խնդրում եմ հաշվի առնել, որ ՀՀ Ազգային ժողովի ընտրությունների դեպքում ևս համամասնական և մեծամասնական ընտրակարգերով ընտրություններն անցկացվում են միաժամանակ:

ՏԻՄ ընտրությունների ժամանակ քվեարկության արդյունքների ամփոփման հերթականության մասին. առաջարկը Դուք չեք հիմնավորել, միևնույն հաջողությամբ համայնքի ղեկավարի թեկնածուներն էլ կարող են առաջարկել առաջինն ամփոփել համայնքի ղեկավարի քվեարկության արդյունքները, ինչն ավելի նպատակահարմար է և ներկայումս այդ հերթականությամբ էլ իրականացվում է, քանի որ այս դեպքում տեղամասային կենտրոնում ունենում ենք ավելի մեծ թվով վստահված անձինք, ինչն իր հերթին ապահովում է քվեարկության արդյունքների ամփոփման գործընթացի առավել թափանցիկություն:

Գյումրի քաղաքում «ավագանու անդամների արտահերթ ընտրությունների անցկացման նպատակահարմարության մասին» հանրաքվե անցկացնելու վերաբերյալ Ձեր առաջարկը հակասում է «Տեղական հանրաքվեի մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածին: Այդ հոդվածի համաձայն տեղական հանրաքվեի կարող են դրվել Սահմանադրությամբ նախատեսված և օրենքով տեղական ինքնակառավարման մարմինների իրավասությանը վերապահված, ինչպես նաև օրենքով նախատեսված հարցերը: Ձեր առաջարկած հարցը Սահմանադրությամբ նախատեսված չէ և օրենքով տեղական ինքնակառավարման մարմինների իրավասությանը վերապահված չէ, ինչպես նաև օրենքով չկա նախատեսված նման հարց, որ կարող է դրվել հանրաքվեի:

Հարգանքով՝

Գ. Ազարյան